



ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

### *Հաստատվել է*

ԵՊԲՀ Գիտական խորհրդի

15.04.2009 թվականի թիվ 15 որոշմամբ,

Գիտական խորհրդի 03.10.2018 թվականի

թիվ 09 որոշմամբ հաստատվել է նոր

խմբագրությամբ

Ռեկտոր Ա.Ա.Մուրադյան

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) «Ֆակուլտետների գործունեության օրինակելի կանոնակարգով» (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանվում են Համալսարանի ֆակուլտետների ուսումնագիտական գործընթացի կազմակերպման, կառավարման և դեկանի մրցութային ընտրության հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, Համալսարանի կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

3. Սույն կանոնակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

ա) *ֆակուլտետ*՝ Համալսարանի ուսումնագիտական, մեթոդական ստորաբաժանում:

բ) *Ֆակուլտետի վերահսկողության ներքո գտնվող ամբիոններ*՝ համալսարանական ամբիոններ, որոնց գործունեությունը համակարգում և վերահսկողություն իրականացնում է համապատասխան ֆակուլտետը:

գ) **Ֆակուլտետի կառավարման մարմիններ՝** ֆակուլտետի ուսումնագիտական խորհուրդ և դեկան:

դ) **Ֆակուլտետի ընդհանուր ժողով՝** համապատասխան ֆակուլտետի դեկանի, դեկանի տեղակալ(ներ)ի և ֆակուլտետի վերահսկողության ներքո գործող ամբիոնների պրոֆեսորադասախոսական ամբողջական կազմ:

ե) **Ֆակուլտետի ընդհանուր ժողովի հեռակա նիստ՝** ֆակուլտետի ընդհանուր ժողովի նիստի իրականացման ապակենտրոնացված հեռավար ձև:

4. Համալսարանի ֆակուլտետը ստեղծվում, վերակազմավորվում և լուծարվում է Համալսարանի Գիտական խորհրդի առաջարկության հիման վրա՝ Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ, բացառությամբ ռազմաբժշկական ֆակուլտետի:

Ռազմաբժշկական ֆակուլտետի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարի իրավական ակտերով, Ռազմաբժշկական ֆակուլտետին վերաբերող Համալսարանի կանոնադրության դրույթներով:

5. Սույն կանոնակարգը, կանոնակարգի փոփոխությունները, լրացումներն ընդունվում են Համալսարանի Գիտական խորհրդի կողմից:

6. Համալսարանի ֆակուլտետը գործում է առողջապահական բնագավառի կամ առողջապահությանը հարակից որևէ ոլորտի մասնագիտական ուղղությանը համապատասխան:

7. Ֆակուլտետն իր գործունեությունն իրականացնում է ուսումնագիտական գործընթացի կազմակերպման հիմնական համալսարանական կառույցների՝ ամբիոնների և ուսումնական ստորաբաժանումների միջոցով:

8. Ֆակուլտետի վերահսկողության ներքո գործող ամբիոնների և այլ ուսումնական ստորաբաժանումների մասնագիտական ուղղվածությունը, որպես կանոն, պետք է համապատասխանի տվյալ ֆակուլտետում կրթական ծրագրով ուսուցանվող մասնագիտությանը: Ֆակուլտետների վերահսկողության ներքո գործող ամբիոնների և այլ ուսումնական ստորաբաժանումների ցանկը հաստատում է Համալսարանի ռեկտորը՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի առաջարկության հիման վրա:

9. Ֆակուլտետն իր գործունեությունն իրականացնում է Համալսարանի ռազմավարական ծրագրի, կրթական ծրագրերի և ուսումնական գործընթացը կանոնակարգող այլ իրավական ակտերի հիման վրա:

10. Սույն կանոնակարգը հիմք է հանդիսանում Համալսարանի առանձին ֆակուլտետի կանոնակարգի ընդունման համար:

### **ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

11. Համալսարանի բարձրագույն կրթության խնդիրներն իրագործելու համար ֆակուլտետն իրավասու է՝

1) կազմակերպել տվյալ ֆակուլտետի կրթական ծրագրով նախատեսված ուսումնական գործընթացը,

2) ապահովել կրթության որակի համապատասխանեցումը ՀՀ որակի ազգային շրջանակներին և միջազգային չափորոշիչներին,

3) ներդնել ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակակից մեթոդներ,

4) ապահովել ուսումնական գործընթացի թափանցիկությունը և հրապարակայնությունը,

5) կազմակերպել և վերահսկել ուսանողների գիտելիքների ստուգման գործընթացը,

6) իրականացնել կրթության որակի մշտադիտարկում,

7) Համալսարանի համապատասխան ստորաբաժանման միջոցով ապահովել Ֆակուլտետի գործունեության վերաբերյալ պատշաճ տեղեկատվություն՝ Համալսարանի պաշտոնական կայքում:

12. Ֆակուլտետն իր գործունեությամբ պետք է նպաստի սովորողների արժեհամակարգի ձևավորմանը՝ ելնելով ազգային և համամարդկային, մարդասիրական և բարոյական սկզբունքներից:

### **ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ**

#### **ԽՈՐՀՈՒՐԴԸ**

13. Ֆակուլտետի կառավարման բարձրագույն մարմինը ֆակուլտետի ուսումնագիտական խորհուրդն է (այսուհետ՝ ֆակուլտետի խորհուրդ), որի լիազորությունների

Ժամկետը 5 տարի է: Ֆակուլտետի խորհուրդը հարցերը քննարկում է աշխատանքային պլանի համաձայն և(կամ) ըստ անհրաժեշտության:

14. Ֆակուլտետի խորհուրդը՝

1) ընդունում է ֆակուլտետի կառավարման հարցերով որոշումներ՝ օրենսդրությանը և իրավական ակտերին համապատասխան.

2) Համալսարանի համապատասխան մարմիններին առաջարկություններ է ներկայացնում ֆակուլտետի ուսումնագիտական գործունեության, կրթական ծրագրերի և ամբիոնների վերաբերյալ.

3) քննարկում է Ֆակուլտետի կիսամյակային քննաշրջանի արդյունքները.

4) ամփոփում է ուսանողների պրակտիկայի արդյունքները.

5) Համալսարանի ռեկտորին է ներկայացնում ֆակուլտետի կրթական ծրագրերը և ուսումնական պլանները՝ Համալսարանի Գիտական խորհրդում հաստատելու համար.

6) ընդունում է ֆակուլտետի կանոնակարգը և ներկայացնում Համալսարանի Գիտական խորհրդի հաստատմանը.

7) լսում է դեկանի ամենամյա հաշվետվությունները և գնահատում նրա գործունեությունը.

8) սահմանված կարգով ընտրում է Համալսարանի Գիտական խորհրդում ֆակուլտետի ներկայացուցիչներին.

9) ֆակուլտետի ներքո ստորաբաժանումներ ստեղծելու և լուծարելու, վերակազմավորելու վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում Համալսարանի ռեկտորին.

10) Համալսարանի Գիտական խորհուրդ առաջարկություն է ներկայացնում ֆակուլտետի աշխատողներին և ֆակուլտետի վերահսկողության ներքո գտնվող ամբիոնների դասախոսներին և աշխատողներին ԵՊԲՀ պատվավոր և վաստակավոր կոչումներ շնորհելու վերաբերյալ.

11) սահմանված կարգով քննարկում է հայցվող գիտական կոչումը ստանալու երաշխավորության հարցը.

12) հաստատում է ֆակուլտետի վերահսկողության ներքո գտնվող ամբիոնների աշխատանքային պլանները.

13) քննարկում և գնահատում է ամբիոնների ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունները.

14) Համալսարանի «Ամբիոնների և դասախոսական կազմի մասին» կանոնակարգով սահմանված կարգով իրականացնում է դասախոսների մրցութային ընտրության գործընթացը.

15) քննարկում և հաստատում է ուսումնական գործընթացին հրավիրված դասախոսների կամ օտարերկյա մասնագետների ներգրավման անհրաժեշտությունը և պահանջները.

16) լուծում է ֆակուլտետի ուսումնական, գիտական աշխատանքների, միջազգային կապերի և այլ գործունեության հարցերը.

17) քննարկում և հաստատում է ֆակուլտետի զարգացման ծրագիրը.

18) լուծում է սույն կանոնակարգից բխող՝ ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ հարցեր:

15. Ֆակուլտետի խորհուրդը նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ Գիտական խորհրդի մրցութային ընտրությանը երաշխավորում կամ չի երաշխավորում դեկանի թեկնածու առաջադրված անձին:

16. Ֆակուլտետի խորհուրդը կազմավորվում է ֆակուլտետի ընդհանուր ժողովի կողմից: Ֆակուլտետի ընդհանուր ժողովը հեռակա նիստով՝ ֆակուլտետի վերահսկողության ներքո գտնվող ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմից և ֆակուլտետի ուսանողներից կազմավորում է ֆակուլտետի խորհուրդ՝ հետևյալ կարգով.

1) Ֆակուլտետի խորհրդի լիազորությունների ժամկետի ավարտից առնվազն 30 օր առաջ ռեկտորը հրամանով հայտարարում է ֆակուլտետի խորհրդի կազմավորման գործընթացի մեկնարկի մասին: Ֆակուլտետի խորհրդի կազմավորման գործընթացի մեկնարկից հետո 10 օրվա ընթացքում ֆակուլտետի վերահսկողության ներքո գտնվող ամբիոնների կողմից ներկայացվում են ֆակուլտետի խորհրդի անդամներ, հետևյալ համամասնություններով՝

ա. Ընդհանուր բժշկության, ստոմատոլոգիական, դեղագիտական ֆակուլտետներում որպես ֆակուլտետի խորհրդի անդամներ ընտրվում են յուրաքանչյուր ամբիոնից մեկ դասախոս.

բ. Հանրային առողջության ֆակուլտետում որպես ֆակուլտետի խորհրդի անդամներ ընտրվում են յուրաքանչյուր ամբիոնից երկու դասախոս:

2) Ֆակուլտետի դեկանի առաջարկի հիման վրա, այդ ֆակուլտետում դասավանդող, սակայն այլ ֆակուլտետների վերահսկողության ներքո գտնվող ամբիոններից որպես ֆակուլտետի խորհրդի անդամներ ընտրվում են յուրաքանչյուր ամբիոնից մեկ դասախոս:

3) ֆակուլտետի դեկանը, դեկանի տեղակալ(ներ)ը ի պաշտոնե համարվում են ֆակուլտետի խորհրդի անդամներ:

4) Ֆակուլտետի ուսանողական խորհուրդը ուսանողների կազմից ընտրում է ֆակուլտետի խորհրդի անդամներ՝ Ֆակուլտետի ի պաշտոնե անդամների և ամբիոնների կողմից ընտրված ֆակուլտետի խորհրդի անդամների ընդհանուր թվի 25 տոկոսի չափով:

17. Ֆակուլտետի ընդհանուր ժողովի կողմից ընտրված Ֆակուլտետի խորհրդի ամբողջական կազմը վավերացվում է Համալսարանի ռեկտորի կողմից:

18. Նոր կազմավորված կամ առանձնահատկություն ունեցող ֆակուլտետների դեպքում ռեկտորի կողմից կարող է սահմանվել ամբիոնների և ֆակուլտետի ուսանողական խորհուրդների կողմից առաջադրվող ֆակուլտետի խորհրդի անդամների այլ համամասնություն:

19. Ֆակուլտետի խորհրդի նիստը համարվում է իրավագոր նրա անդամների երկու երրորդի ներկայության դեպքում:

20. Ֆակուլտետի խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ, եթե Համալսարանի կանոնադրությամբ և սույն կանոնակարգով ձայների ավելի մեծ քանակ նախատեսված չէ:

21. Ֆակուլտետի խորհրդի նիստերն արձանագրվում են: Արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ժամանակը, ներկա անդամների անունները, ազգանունները, օրակարգի հարցերը, քվեարկության դրված հարցերը, քվեարկության արդյունքները, ընդունված որոշումները: Արձանագրությունը ստորագրում են նախագահողը և քարտուղարը, որոնք պատասխանատու են արձանագրությունը ճիշտ կազմելու համար:

22. Ֆակուլտետի խորհրդի նախագահի ղեկավարությամբ խորհրդի քարտուղարը՝

1) կազմակերպում է ֆակուլտետի խորհրդի նիստերի աշխատանքները,

2) նախապատրաստում է խորհրդի նիստի օրակարգի նախագիծը և Ֆակուլտետի խորհրդի անդամներին տեղեկացնում է այդ մասին նիստի անցկացումից առնվազն երեք օր առաջ,

3) ֆակուլտետի խորհրդի նիստի մեկնարկից անմիջապես առաջ գրանցում է Ֆակուլտետի խորհրդի անդամներին,

4) ֆակուլտետի խորհրդի նիստն ավարտվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում կազմում է նիստի արձանագրություն:

23. Ֆակուլտետի խորհրդի նիստը կարող է գումարվել նաև հեռակա՝ խորհրդի անդամների ստորագրությամբ ամրագրված հարցման միջոցով: Հեռակա նիստ անցկացվելու դեպքում նիստի մասին տեղեկացվում են ֆակուլտետի խորհրդի բոլոր անդամները: Հեռակա նիստի մասին ֆակուլտետի խորհրդի անդամի տեղեկացված լինելը հավաստվում է ստորագրությամբ՝ էլեկտրոնային կամ այլ տարբերակով: Հեռակա նիստն իրավագոր է Ֆակուլտետի խորհրդի անդամների առնվազն երկու երրորդի մասնակցության դեպքում: Ֆակուլտետի խորհրդի առաջարկվող որոշմանը խորհրդի անդամի դեմ լինելու դեպքում ստորագրության հետ միաժամանակ խորհրդի անդամը գրառում է «ԴԵՄ ԵՄ» բառերը:

24. Ֆակուլտետի խորհրդի որոշումները պարտադիր են ֆակուլտետի աշխատողների և ֆակուլտետի վերահսկողության ներքո գործող ամբիոնների և սովորողների համար:

### **ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԸ**

25. Ֆակուլտետի գործունեությունը կառավարում և կազմակերպում է ֆակուլտետի ղեկանը՝ Համալսարանի կանոնադրությանը և սույն կանոնակարգին համապատասխան:

26. Համալսարանի ֆակուլտետի ղեկանի պաշտոնը Համալսարանի Գիտական խորհրդի կողմից մրցութային կարգով ընտրվող պաշտոն է: Ֆակուլտետի ղեկանի լիազորությունների ժամկետը 5 տարի է:

27. Ընտրությունների արդյունքների հիման վրա ընտրված դեկանին պաշտոնի է նշանակում Համալսարանի ռեկտորը և սահմանված կարգով կնքում աշխատանքային պայմանագիր:

28. Ֆակուլտետի դեկանի պաշտոնին կարող է հավակնել անձը, ով ունի՝

1) բարձրագույն կրթություն՝

– ընդհանուր բժշկության և ստոմատոլոգիայի ֆակուլտետի դեկանի պաշտոնի դեպքում՝ բարձրագույն բժշկական կրթություն.

– դեղագիտական ֆակուլտետի դեպքում՝ բարձրագույն դեղագիտական կրթություն.

– հանրային առողջության ֆակուլտետի դեպքում՝ բարձրագույն բժշկական և հանրային առողջապահության մագիստրոսի կրթություն.

2) գիտական աստիճան,

3) առնվազն 10 տարվա գիտամանկավարժական ստաժ՝ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում:

29. Օտարերկրացիների ուսուցման դեկանի պաշտոնին կարող է հավակնել անձը, ով ունի՝

1) բարձրագույն բժշկական կրթություն,

2) գիտական աստիճան,

3) առնվազն 10 տարվա գիտամանկավարժական ստաժ՝ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում,

4) օտար լեզուների (անգլերենի և ռուսերենի) գերազանց իմացություն:

30. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել ֆակուլտետի դեկանի պաշտոնում:

31. Դեկանի ընտրությունը կազմակերպվում և իրականացվում է սույն կանոնակարգով սահմանված ֆակուլտետի դեկանի ընտրության ընթացակարգին համապատասխան:

32. Ֆակուլտետի դեկանը՝

1) համակարգում է ֆակուլտետի ուսումնական, մեթոդական, գիտական, միջազգային և այլ գործառնությունները,

2) հրավիրում և նախագահում է ֆակուլտետի խորհրդի նիստերը:



3) ապահովում է համալսարանական մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի և ֆակուլտետի խորհրդի որոշումների կատարումը,

4) ի պաշտոնե հանդիսանում է Համալսարանի ուսումնամեթոդական խորհրդի անդամ,

5) արձակում է կարգադրություններ՝ ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու մասին,

6) ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ՝ ուսանողներին Համալսարանից հեռացնելու մասին,

7) պրակտիկայի բաժնի հետ համատեղ կազմակերպում է ուսանողների ուսումնական պրակտիկայի անցկացման և ամփոփման գործընթացը,

8) վերահսկում է ուսանողների գիտելիքների ստուգման գործընթացը,

9) ռեկտորի հաստատմանն է ներկայացնում դեկանի տեղակալների և ֆակուլտետի խորհրդի քարտուղարի թեկնածությունները,

10) Համալսարանի ռեկտորին ներկայացնում է ուսանողներին և պրոֆեսորադասախոսական կազմին խրախուսելու, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին առաջարկություններ,

11) ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին առաջարկություններ է ներկայացնում ուսումնական ձեռնարկների, դասագրքերի, ուսումնական և մեթոդական այլ նյութերի կարիքների մասին,

12) կազմակերպում և անցկացնում է ուսումնական, գիտական և մեթոդական խորհրդակցություններ և սեմինարներ,

13) նախապատրաստում է ուսանողների առաջադիմության հիմքով փոխատեղման գործընթացը և ներկայացնում առաջարկություններ,

14) Ֆակուլտետի գործունեության մասին ներկայացնում է տարեկան հաշվետվություն,

15) սահմանված կարգով Գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում անվանական և ռեկտորի կրթաթոշակի հավակնորդներին,

16) իրականացնում է ՀՀ օրենսդրությանը, Համալսարանի կանոնադրությանը և սույն կանոնակարգին չհակասող գործառույթներ:

33. Սույն կանոնակարգով դեկանի համար սահմանված լիազորությունները և դեկանի ընտրության ընթացակարգը տարածվում է նաև Համալսարանի օտարերկրացիների ուսուցման դեկանի վրա:

Օտարերկրացիների ուսուցման դեկանը անդամակցում է և հաշվետու է ընդհանուր բժշկության, ստոմատոլոգիական և դեղագիտական ֆակուլտետների խորհուրդներին:

34. Դեկանը ֆակուլտետի աշխատանքները համակարգում է դեկանատի միջոցով:

35. Դեկանի բացակայության դեպքում դեկանին փոխարինում և ֆակուլտետի խորհրդի նիստերը նախագահում է դեկանի տեղակալը:

### **ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ**

#### **ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

36. Համալսարանի ֆակուլտետի դեկանի պաշտոնի համար Գիտական խորհուրդը կազմակերպում է մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Համալսարանի կանոնադրությանը, սույն կանոնակարգին համապատասխան:

37. Դեկանի ընտրության համար մրցույթը հայտարարվում է նշանակված մրցույթի օրվանից առնվազն 30 օր առաջ:

38. Մրցույթի վերաբերյալ Համալսարանի ռեկտորը հայտարարություն է հրապարակում առնվազն 2000 տպաքանակ ունեցող մամուլում և Համալսարանի պաշտոնական կայքում:

39. Ֆակուլտետի դեկանի թեկնածու(ներ)ի դիմումները և կից փաստաթղթերը կարող են ներկայացվել հայտարարության հրապարակման օրվանից հետո 15 օրվա ընթացքում: Հայտարարությամբ հրապարակված մրցութային ընտրությանը մասնակցել ցանկացող անձինք (այսուհետ՝ Թեկնածու) սույն կանոնակարգով սահմանված ժամկետում Համալսարանի Գիտական խորհրդի քարտուղարություն են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) մրցութային ընտրությանը մասնակցելու մասին դիմում՝ հասցեագրված ռեկտորին, շարադրված ազատ ոճով,

2) համառոտ ինքնակենսագրություն՝ ժամանակագրական շարադրությամբ,

3) աշխատանքային գրքույկից քաղվածք կամ աշխատանքային գործունեության մասին տեղեկանք,

4) բարձրագույն կրթության՝ բակալավրի և մագիստրատուրայի (կամ համարժեք) դիպլոմը կամ նոտարի կողմից պատշաճ վավերացված դիպլոմ(ներ)ի պատճենները,

5) գիտական աստիճանը հաստատող փաստաթուղթը կամ նոտարի կողմից պատշաճ վավերացված փաստաթղթերի պատճենները (այլ պետություններում հաստատված գիտական աստիճանները պետք է փոխձանաչված լինեն Հայաստանի բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից),

6) գիտական կոչումը հաստատող փաստաթղթի պատճենը և պարգևատրումների, մրցանակների, պատվավոր և այլ կոչումների մասին փաստաթղթերի պատճենները, եթե առկա են,

7) մրցույթին նախորդող 1 ամսվա ընթացքում տրված երաշխավորություններ, Համալսարանի ֆակուլտետի խորհրդի և(կամ) ամբիոնի և(կամ) այլ գիտական, կրթական կազմակերպության և(կամ) տվյալ մասնագիտության ոլորտի գիտնականի կողմից, եթե առկա են:

40. Գիտական խորհրդի քարտուղարության կողմից Թեկնածուի դիմումը և փաստաթղթերը չեն ընդունվում, եթե չի պահպանվել սույն կանոնակարգով սահմանված փաստաթղթերի ներկայացման ժամկետը:

41. Թեկնածուի դիմումը և ներկայացված փաստաթղթերը քննարկվում են դիմումի ներկայացման վերջնաժամկետից հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում:

42. Թեկնածուի դիմումը մերժվում է ռեկտորի կողմից գրավոր պատասխանով, եթե ներկայացված փաստաթղթերը չեն բավարարում սույն կանոնակարգի պայմանները:

43. Ֆակուլտետի ղեկանի մրցույթի ժամանակ Գիտական խորհրդի քարտուղարը, ըստ այբբենական կարգի, ներկայացնում է Թեկնածու(ներ)ի աշխատանքային տվյալները, ինչպես նաև՝ երաշխավորագրերը, եթե առկա են:

44. Գիտական խորհուրդն իրավասու է կազմակերպել քննարկում Թեկնածու(ներ)ի վերաբերյալ:

45. Գիտական խորհրդի որոշմամբ՝ փակ, գաղտնի քվեարկություն անցկացնելու համար մրցույթի Թեկնածու(ներ)ի անուն, ազգանունները ներառվում են մեկ առանձին

քվեաթերթիկի մեջ: Գիտական խորհրդի նիստին Թեկնածու(ներ)ի ներկայությունը պարտադիր է:

46. Ցանկության դեպքում Թեկնածուն իրավունք ունի ծրագրային ելույթ ունենալ: Ծրագրային ելույթի համար նախատեսված ժամանակը կարգավորվում է նախագահողի կողմից:

47. Գիտական խորհրդի անդամներին ներկայացվում է փակ (գաղտնի) քվեարկության ընթացակարգը:

48. Փակ (գաղտնի) քվեարկություն անցկացնելու և դրա արդյունքներն ամփոփելու համար Գիտական խորհրդի անդամների առաջարկով և խորհրդի որոշմամբ ընտրվում է առնվազն 3 անդամից կազմված հաշվիչ հանձնաժողով: Թեկնածուները չեն կարող ընդգրկվել հաշվիչ հանձնաժողովի կազմում կամ առաջադրել թեկնածուներ: Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

49. Հաշվիչ հանձնաժողովը Գիտական խորհրդի յուրաքանչյուր անդամի տալիս է մեկ քվեաթերթիկ: Քվեաթերթիկ ստացողը ստորագրում է Գիտական խորհրդի անդամացուցակում:

50. Դեկանի պաշտոնի մրցութային ընտրության մեկ թեկնածուի քվեարկության դեպքում՝ Գիտական խորհրդի անդամն իր որոշմամբ.

ա) քվեարկում է «**Կողմ**» թեկնածուին՝ կատարելով համապատասխան դատարկ քառանկյունում ✓ ձևի նշումը կամ

բ) քվեարկում է «**Ղեմ**» թեկնածուին՝ կատարելով համապատասխան դատարկ քառանկյունում ✓ ձևի նշումը:

Դեկանի պաշտոնի մրցութային ընտրության մեկից ավելի Թեկնածուների քվեարկության դեպքում քվեաթերթիկի մեջ այբբենական կարգով նշվում են թեկնածուների անուն, հայրանուն, ազգանունները և ներքևում «Բոլորին դեմ եմ» բառերը: Մեկից ավելի թեկնածուների քվեարկության դեպքում՝ Խորհրդի անդամն իր որոշմամբ.

ա) քվեարկում է «**Կողմ**» միայն մեկ Թեկնածուի օգտին՝ կատարելով տվյալ թեկնածուի անուն ազգանվան դիմացի դատարկ քառանկյունում ✓ ձևի նշումը կամ

բ) կատարում է ✓ ձևի նշում՝ «*Բոլորին դեմ եմ*» համապատասխան դատարկ քառանկյունում:

Քվեաթերթիկում չնախատեսված նշումների, ընդգծումների կամ այլ նշանների առկայության և(կամ) նշումը վանդակից դուրս լինելու դեպքում քվեաթերթիկը համարվում է անվավեր:

Քվեաթերթիկն անվավեր ճանաչելու որոշումը կայացնում է հաշվիչ հանձնաժողովը:

51. Քվեարկությունն ավարտվելուց հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն:

52. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները՝ յուրաքանչյուր Թեկնածուի համար առանձին, որից հետո Գիտական խորհուրդը հաստատում է հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը:

53. Թեկնածուն համարվում է ընտրված, եթե նրա օգտին կողմ է քվեարկել Գիտական խորհրդի քվեարկությանը մասնակցած խորհրդի անդամների ձայների կեսից ավելին:

54. Եթե ընտրվելու համար անհրաժեշտ ձայներ ստանում են մեկից ավելի թեկնածուներ և ձայների քանակը հավասար է, այս դեպքում անցկացվում է կրկնակի քվեարկություն: Կրկնակի քվեարկությունը կազմակերպվում է Գիտական խորհրդի նույն կամ հաջորդ նիստում՝ սույն կանոնակարգով սահմանված կանոններին համապատասխան և նոր թեկնածուներ չեն առաջադրվում:

55. Ֆակուլտետի դեկանի ընտրությունները համարվում են չկայացած, եթե՝

1) դեկանի պաշտոնի միակ թեկնածուն չի ստացել Գիտական խորհրդի ներկա անդամների ձայների մեծամասնությունը,

2) կրկնակի քվեարկության արդյունքով որևէ թեկնածու չի ստացել Գիտական խորհրդի ներկա անդամների ձայների մեծամասնությունը:

56. Գիտական խորհուրդը, հաշվիչ հանձնաժողովի հաղորդման հիման վրա, ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) ֆակուլտետի դեկան ընտրվելու մասին,

2) կրկնակի քվեարկություն անցկացնելու մասին,

3) ընտրությունը չկայացած ճանաչելու մասին:

Ընտրության գործընթացը և արդյունքները կարող են բողոքարկվել Թեկնածուի կողմից՝ այդ մասին դիմում ներկայացնելով ռեկտորին, քվեարկության ավարտից հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում:

57. Ընտրության գործընթացում Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Համալսարանի կանոնադրության և սույն ընթացակարգի խախտումներ ի հայտ գալու դեպքում ռեկտորը հիմնավորված և պատճառաբանված որոշմամբ 3 օրվա ընթացքում ընտրությունը կարող է համարել անվավեր և նշանակել նոր ընտրություն:

58. Ֆակուլտետի դեկանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում ռեկտորը նշանակում է նոր ընտրություն՝ սույն ընթացակարգին համաձայն: Առանձին դեպքերում, երբ ստեղծվել է նոր ֆակուլտետ կամ մրցույթին ոչ մի Թեկնածու չի առաջադրվել կամ ընտրությունը ճանաչվել է չկայացած կամ անվավեր կամ հաստիքը թափուր է, ռեկտորն իրավասու է դեկանի պաշտոնում հրամանով նշանակելու ժամանակավոր պաշտոնակատար՝ կազմակերպելով նոր մրցութային ընտրություն:

59. Ընտրությունների վերաբերող բոլոր փաստաթղթերը, այդ թվում նիստի արձանագրությունները պահպանվում են Համալսարանում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

\* \* \*